491.99-8
Ф 14

1920
и.д/р

Дмитрієвич

Огієнко

и др/р

1920 р

1920

12 MAR 2013

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Պ. ՊԱԼԵՆՑ ԳՐԱՏԱՆ

428
47-ԳԱ
49199-8
Գ-14

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԳԱԶԱՆՃԵԱՆ

# ԾԻԱԾԱՆ

Ա. ԳԻՐՔ

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А. Публичная Библиотека
7/XI 1922
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

1.0.02
8632

ՔԵՐԱԿԱՆ-ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

## ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒԻ

Բ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

*Մեր թարգմանած, հետեւողութեամբ պատրաստած եւ ինքնուրոյն հատուածներու արտատպութեան իրաւունքը վերապահուած է:*

Կ. ՊՈԼԻՍ
ԳՐԱՏՈՒՆ Պ. ՊԱԼԵՆՑ
1920

ՑՋԱ
ԱՔ·ՖԱ

ՏՊԱՐԱՆ ԵՒ ԿԱԶՄԱՏՈՒՆ
Օ. ԱՐՋՈՒՄԱՆ
№ 281

# ԾԻԱԾԱՆ

## Ա. ԳԻՐՔ



*ա մ ամ*

*մ ա մ*

*ա մա ամ մամ մամա*

***ա մա ամ մամ մամա***



պ պ

պապ

պա ապ պապ պապա
Մամ պապ Մամա պապա

պա ապ պապ պապա
մամ պապ մամա պապա





Տ տ

տատա

տա ատ տատ տատա
Տատ պատ տապ տամ
Մամա պապա տատա

տա ատ տատ տատա
մատ պատ տապ տամ
մամա պապա տատա



սար

Ս ս ր

աս սա մաս պաս տաս
րա ար մար պար տար
ասպար տապար պարապ
ամպար մամա՛, պարպար
տարտար արամ

սա աս մաս պաս տաս
րա ար մար պար տար
ասպար տապար պարապ ամպար
մա՛մա՛, արամ պարպար տարտար





էմմա

Է է

է էր սէր մէ մէր տէր
արամ. աս պատ է,
սա մամ է, էմմա պար
պարէ

է էր սէր մէ մէր տէր
ա՛րամ, աս պատ է, սա մամ է
է՛մմա, պար պարէ

**10**

տասը

# Ը ը

Ը մը մամ մը պապ մը Ը
մատ մը մամը պապը տէրը
մատը տասը ամպը մարտը
արմատը արարատը ըսէ
աս տասը մատ է

ը մը մամ մը պապ մը մատ մը

մամը պապը մատը տասը տէրը

ամպը մարտը արմատը արարատը

ըսէ՛, աս տասը մատ է





ուլ

# ու Լ ուլ

ու ում ուր ուս ուլ տուր
ալ էմմա լու լուր տալ սալ
սուր մուր տալ լամ պալատ
էմմա, ո՞ւր է արամը, լուր տուր

ու ում ուր ուս ուլ ալ տալ

լար լու լուր սուր մուր տուր

է՛մմա, ո՞ւր է արամը, լուր տուր

ա՛րամ, ուլը տար, սուրը տուր



Ե ե

երես

եմ ես եր ել երամ երես
մեր պետ սեր սերմ պարել
ել. մամա, եր տուր արամը
ես եմ. ես մամ ըսեմ. ըսէ

եմ ես ետ եւ մեր պետ սերմ
ես եմ արամ. տե՛ս սա երամ է,
սա երես է. ետ տուր տուրը
ըսէ՛, սպասել, պարել, մարել, լարել





Կ կ

կամար

կը կու կուտ ակ ուկ
կամ կապ կամար մէկ
կէսը կապար ջերմուկ
տուկ ու կապուտ. ելի՛ր
պապուկ. կեր ու ելիր

ակ ուկ կը կու կուտ կապ կէս
երէկ ո՞ւր էր արամը
պապուկը կելլէր սարը
մամը կար կը կարէր
կը կարէր ու կը կարէր
էմմա պար կը պարէր
կը պարէր ու կը պարէր
կարա՛պետ, կերակուր կեր,
կապէ կամարը կամ ել սարը.



Ի ի

իլիկ

ի իմ իր կը մի լի միս գիրկ
իլիկ իրիս գառի կարմիր
մայրիկս սիրում, մայրի գուր
մայրիկը. գերս կարմիր
կը պարէ

կեռասի. կարմիր կեռասի. մասիսը սար է. ապրիլը ամիս է.

ուլիկը կուլար մէ՜ մէ՜ մէ՜
ո՛ւլիկ, ո՛ւլիկ, մի՛ լար, ուլի՛կ,
մի՛ լար, մի՛ լար, կարմի՛ր ուլիկ.





Ն ն

նամակ

նա ան ին տան սին կին
գուն գունդ նամակ լուսին
աննան ու նունիկը մայրիկ
ունին կապոյտ կոպէ մուկեր

Նապա՛ստակ, սիրո՛ւն նապաստակ

լո՛ւսին, լո՛ւսին, լուսերես

մա՛ննիկ, նամակը տար, մամիկին տուր

արմի՛նէ, ամէն կիրակի մեր տունը

եկուր, նա՛ կինը արամին մաման է



Շ շ

շիշ

էշ ու [illegible] Շէկ նուշ Շուն
Աշուն Շերամ Շուշան կաշի
Աննան ու Շաւարշը իրար
Շատ կը սիրէն

Շիշը մի է. էշը ընտանի կենդանի է
արշակ ու սիրանուշ ընկեր են
տես շամիրամին շէկ կատուն, սիրուն
շընիկը, կարմիր խշուկը
ո՛ւշ եկուր, անո՛ւշ եկուր
նո՛ւշ, նո՛ւշ, փնո՛ւշ նուշ,
կե՛ր, կե՛ր, ըրէ անուշ.





Դ դ

դուռ

դա դու դուն դուռ ուռ
առ առու առուակ Դըռնակ
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]

տի՛րան, կարդա՛, դա՛ս սերտէ
շուշանին երեսը նուռի պէս կարմիր է
դո՞ւն կերար կանկառը
պա՛պուկ, տառ մը կ՚ըսե՞ս. կըսեմ.
առուին տակ ուռենի,
կարմիր կարմիր ուռենի.



Բ բ

բադիկ

Բու Բիբ Բան Բակ Բառ
Բուն Բարի Բադիկ Բարակ
Բարեկամ. Բանջէն. շուռ
Բանձր Բադիկ.
Բադիկ. Բամբակ Բադիկ

բարե՛կամ, ե՞րբ եկար, բալը բերի՞ր
բադերը կը պտըտին բակը
բարեբեր արտ մը ունի բարունակ
արտուտիկը ունի բունիկ սիրունիկ





Ս.Ս.Խ.Հ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI - 1922
Имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
1002
8637

գետակ

Էգ Գեղ Գիր սագ Երգ Գէշ
Գարի Գեղին Գինի Գունդ
ագռաւ - սագիկ. սագիկ.
չէկի ուր.- չէկի գետակ.
ուրկէ կուգաս - գետակէն

ես շատ կը սիրեմ գարունը
ե՞րբ պիտի գաս, գարուն սիրո՛ւն
եկո՛ւր շատ շուտ, անուշ գարուն
ես գիր կը գրեմ, ես գիտեմ գիր
գրրել, գիտեմ կարդալ, գիտեմ երգել
գի՛սակ, գրրէ սագ, գա՛գիկ, դուն ալ
գրրէ սագիկ, գա՛ռնիկ, դուն ալ գրրէ



ո ո

որսորդ

որ ուր որս ուսր նոր շոր
որդի ոսկի որսորդ փոփ
շուր ուրկոր ցես փորոր
կոսրոսրէ պեցորոս նոթ
նոր շորեր. ունի

ո՛րսորդ, որսա՛ նապաստակը
ոսկին կլոր է. շունը ոսկոր կուտէ
տեսա՞ր կարմիր տոտիկ բադիկը
մամիկը կոլորէ խիկը
գլորէ՛, մա՛միկ, գլորէ՛,
նունիկներդ չորերը նորէ.





օ Շ օղ

օղակ

օ օր օն օղ օշ աշէշէն
օշակ աշէն պշրաւոշ աշաշակ
ժէշ. օննել. շող ծը ժեր ժրէ՞
ջեռնեմ օրերը շոր կը.
սրբէ ժեշան

ողորմէ՛, տէ՛ր, լսէ մեր աղաղակին
կաղանդի սեղանը չխտկեցին
օ՛ն, պօ՛ղոս, գրէ՛ աղօտ, արօտ, դեղին
կաղին, օղիկ, չողիկ
օր օր օր օր, իմ մանկիկ,
իմ անուշիկ, նանոշիկ.



Վ վ

վարդ

Վան Վար Վեր Վէժ Վարդ
Վիզը Կով Վզակ Վեղար
Վնաս Փորով. Վարդը Շատ
անուշ կը հոտի. Վարդան
ու Փեշտամ Աղէկ կը լողան

վաղարշակ շատ բարի է, բարի տղան
գովեստ կընդունի, բարենիշ կառնէ
վարդապետը վեղար ունի
կո՛վիկ, կո՛վիկ, ո՞ւրկէ եկար.
մարգերէն, արօտներէն





ժամ

Ժ ժ

իժ ժիր ժամ ու ժուժ օժիր
Ժաժիկ աժան պարզիժ Ժաժակ
ժիր տղան սիրելի է ամենուն
ժամը իննին դրան սիրտի Փամ

ուղտը ուժեղ կենդանի է
իմ բաժինս տուր որ ուտեմ
մեր վարժարանը շատ մօտիկ է
ժամանակ ունի՞ս տուն գալու
մերուժան ու վարուժան միասին
ժուռ կուգան



Զ զ

զանգակ

[illegible]

մըժեղը զագիր բըզզեց մըն է
զա՛րուկ, արագ մի՛ վազեր. եկո՛ւր
ու տե՛ս մեր սիրուն մանկապարտէզը
ծըզը կը շարժեր կոտոշները
զատիկ է եկեր,
մեզ նոր օր բերեր.





Հ հ

հոլ

հա հէ հօ ահ ոհ հուր հող
համ հիմ կահ հաւաք հովիւ
[illegible]
[illegible]

հերմի՛նէ, կօշիկըդ հանէ.

գառնուկը հօ՛ս բեր.—ահա՛ բերի

տեսար հօտաղը իր հօտին հետ

հովե՛ր, տարուբեր հովեր

գէ՛շը տար, աղէկը բեր.



ք ք

քար

քա քու իք ոք քար մերք
քաղաք ցանքով ոսք մաքուր
քուրքիկ. մեղք կրակ. ղուշ քաղէ
աքաղաղը կերգէ. կուկուրիկու

մենք քաղաքը կը բնակինք, դուք՝
գեղը, անա՛հիտ, քանի՞ տարեկան ես.
հինգ տարեկան
ահը վեր է քան մահը
օրօր ըսեմ, քունը տանի
մաման առնէ տունը տանի.





ց ց

ցորեն

ցան ցից ցեց ցող ցուպ ցանց.
ցուցակ կայծի ցորեն ցանեց
ցողուն. ցայգին ձեռ. բան աղէ
ցուրտը բաղէժ որ ներս ձիւն

երեկ օդը ցուրտ էր. հիմա տաք է
մըշակը ցորեն ու գարի ցանեց
պարտիզպանը ցընցուղով ոռոգեց մեր
պարտէզը
հաց ու պանիր, կե՛ր ու քանի՛ր


նաւ


տերեւ

աւ  աւ  եւ  եւ

նաւ աւազ ցաւ
ցաւած նաւաւ
աւազ ուստակ
եւ եւս ցեւ
սեւ ցերեւ նաւ
աւեցրս պարզեւ

Տերեւ, եւ մինէ տերեւ ելար
աշխ նաւաւ նոր գարուն
հեղը Սերուս նոր տարի



պառաւը երեք հաւ ունէր և զաւկի
պէս կը սիրէր
աւազանը շատոնց ցամքեցաւ
լերան ետեւ կարմիր արեւ,
կարմիր արեւ սարին վերեւ.
սեւ սեւ ամպեր, ամպե՛ր սեւ սեւ
մէկդի՛ գացէ՛ք, բացէ՛ք, արեւ.


խ  չ  խ  չ

խաւ խիւ ախ ոխ ծուխ սոխ
չար աչ խաչ ճաչ ճաշ չոր
ճիճի, խաղալիկ, ինչպէս կանչէն
իմ ճանչուորս ալ
կը ճանչ ժամուն խաղալ

չար տղաք պատիժ կ'ընդունին
խա՛չիկ, խե՞ւ ես, ի՞նչ ես.

ո՛չ խեւ եմ, ոչ խենդ
կովը մօ՜ մօ՜ կը բառաչէ ,
պոչը վեր վար հա՛ կը շարժէ .
ժամը ունի խաչ ու խորան
քըշոց , բուրվառ , աւետարան .



Ծ ծ

ծառ

ած օծ ծամ ծիլ ծառ ծով
ծանծաղ ծածան ածուխ
ծառերը ծաղկեցան. ծաղիկ
բացին. ծափիկ ծափիկ
ծիրանի

ծովակը խոր չէ , ծանծաղ է ,
ածուխը սեւ է , մածունը՝ ըսպիտակ



տես նաշխուն ծիածանը
անծիր , անծիր ծըրարոցիկ ,
եկո՛ւր, ծիծե՛ռնակ, սիրո՛ւն ծիծեռնակ



Ճ ճ

ճանճ

ճար ճեմ ճիճ աճ հաճ ճանկ
ճանապարհ ճիրան օճառ ոճիր
ճըպուռը ճըռ ճըռ կը ճըռճըռար
ճըրագը ճաճքան մարեցաւ

կատուն սուր ճանկեր ունի
կաւիճը ճերմակ է . ճահիճը չորցաւ
ուր ճենճ , հոն ճանճ
վարդավառ , ճըրագըդ վառ
պար ընեմ, ճոր ընեմ,
կապան կըտրեմ, չոր ընեմ



Փ փ

փիսիկ

փիղ ափ խուփ չափ փուփ շափ
փափախ փափուկ փարախ
Ես ցեխ շատ փոքրիկ եմ
Հարցը փուշ ունի
առանց փուշի հարց չկար

փիղը պատիճ ունի, խոշոր կենդանի է
գլորեր է խուփիկը, գլտեր է
պլտուկը
փիսիկ, փիսիկ
դուն չար փոքրիկ,
ունիս կեռ կեռ,
սուր սուր ճանկեր.





Թ թ

թիթեռ

Թի Թա Թե Թաթ Թութ խութ
Թաղար Թանձրոր Թրթուռ
Թափօրին Թավիշէ Թիկնոց ունի
Թութակը մարդու պէս կը խօսի

Ե՛լ, թեւ թեւի տանք ու պարենք,
դուք ալ զարկէք թմբուկը
մեղուն թռաւ իր փեթակէն
թո՞ւթը աւելի կը սիրես թէ թուզը
խատուտիկ, պուտպուտիկ,
թեթեւ թռիչ թիթեռնիկ,
թեւիկներով ծափ կուտաս,
ծաղկէ ծաղիկ պար կուգաս։



եօթը վառեակ

եա եօ իէ

եա եօ իէ

այբեան Մարեան սենեակ
կեանք եօթը եօթնեակ արդեօք
մեր հաւը եօթը վառեակ ունի
աղբեակը թռաւ եղեգներէն

**Թաթուլին մականունը Թորգոմեան է**
**արդեօք քանի՞ սենեակ ունի տունը**



**աղքատները նեղութեան մէջ են**
**կրտ կրտ կրտ կրտկրտա՜ք,**
**Հաւ-մայրիկին թեւին տակ**
**վառեակներ կան ըսպիտակ.**



Ջ ջ

ջութակ

աղջ էջ ջուր մէջ արջ ջան
ճիւղ իջեւան ջութակ ջարդ
ջարդին ծրար ջուրին մէջ
աս ձիրը քանի՞ էջ ունի

**դասարանին առաջին աղջիկը սա**
**զարուհին է**

տիգրան շատ լաւ ջութակ կ'ածէ
գրիչուն խաղցուց իր որջը
գէ՛որգ, վա՛ր իջիր սանդուխէն



Յ ձ

ձի

ձի ձեւ ձէթ ձուկ ձչ ձորձ
ձագար դերձան ձիթենի
անցած ձմեռ շատ ցուրտ էր
ես երկու ձեռք ունիմ
աղ ու ձաւ

ձիերը կառքերու կը լծեն
գերձակը կարեց ձեւաւոր հանդերձներ
ես գանձ կ'ըսեմ, դուն տանձ կը
հասկնաս



ջուրը տեսաւ, ձուկ եղաւ
ծակը տեսաւ, մուկ եղաւ



իւ իւ

իւղ իւր հիւր
ալիւր արիւն
ցիւ թիւ փիւ
կորիւն հովիւ
պատրիւ հիւսիս
ձիւն աղբիւր



անիւ

կառքին անիւը կը թաւալի
դպրոց կ'երթանք սորվելու
համար գիտութիւն

ցորենով ալիւր կը շինեն
ձեր տունը շատ հիւրեր եկան
ես պիտի սորվիմ գրել թիւեր և
հաշիւ ընել
առիւծին ձագին կ'ըսեն կորիւն
ձիւնը կուգար փաթիլ փաթիլ
հետն ալ անձրեւ կաթիլ կաթիլ



Յ յ

յոպոպ

յար յաթ յարդ յօնք յարկ
յարակ յանկարծ յոխորտ Յ Յ
յակոբը Յ յաղթեց
յարդը Յ Յ Յ է



յիսուս յարութիւն առաւ
պարտէզին մէջ կան գեղեցիկ
յասմիկներ և յափրուկներ
աղբիւրը շատ յըստակ էր և ջուրին
յատակը կերեւնար



Այ այ

մայր ու տղայ

այ Մայ հայ բայ Ձայ Ժայ
կայ Լայ դայ ՂԸայ փխայ
Շուկայ փայլ այլ Խայր
Յայն կայան այ այ Մար
բնկայ Թայրիկ

ես հայ եմ և անունըս հայկ է
հովիւը պոռաց.— գայլ կայ, գայլ,
հասէք

Նայէ՛, հա՛յրիկ, սա փայլուն ծաղիկներուն

մարդ մարդու քահանայ,
մարդ մարդու սատանայ.



ոյ ոյ

բոյն

ոյժ բոյն լոյս

խոյ խոյակ — խոյ գոյական

կոյր հաճոյ

հաճոյ — ողջոյն գոյն

առոյգ կոյր

Նոյ այգի տնկեց

արու ոչխարին խոյ կըսեն
ագռաւներին բոյներին մէջ հաւկիթներ ածեց



լոյսը բոյսին ոյժ կուտայ
պոլսոյ մէջ շատ հայ կայ
բարի լոյս.— աստուծոյ բարին
մանկութիւնը հաճոյալի է,
բայց ծերութիւնը՝ անհաճոյ



ֆէս

ֆ Ֆ

Ֆէս Ֆրանք Մորֆին

ֆէսը օսմանեան գլխարկ է
ֆրանքը ֆրանսական դրամ է
մորֆինը թոյն է

| | | | |
|---|---|---|---|
| ուլ | ուա | ուլ | ուա |
| ուէ | ուի | ուէ | ուի |
| ուե | ուու | ուե | ուու |
| ւա | ւե | ւա | ւե |
| ւէ | ւի | ւէ | ւի |
| ւո | ւու | ւո | ւու |

Ով Ովսէ սայրուած
Պարուէր Բարութեր սասուք
Վենուոր Թագուոր Ներսէս
Նուարդ որդւոյ հաճոյ

յիսուս երուսաղէմ մտաւ
ովսաննաներով
ովկիանոսը ընդարձակ է
առուակը կընթանայ հեզիկ
ո՛վ մանուկ, պատուէ մեծերը
աղուէսը խորամանկ է
յովհաննէս բանուոր պիտի ըլլայ
ազնուութիւն ունեցէք, որդա՛ք
նուարդ հագուեցաւ, աղուոր աղջիկ
մը եղաւ

սկ սր սյ     սկ     սս     սպ

սփ սղ սթ     սփ     սք     սթ



Ակռաներդ աղէկ պահէ պէտք
Արօրէն Աթոռներ Աւր
Արփիարեան, Աստուած որ Փառ

չուչանը սպիտակ է
ամպերը սքօղեցին լուսինը
օրիորդ պայծառ սքանչելի դաշնակ
կը զարնէ
աստուած ստեղծեց աշխարհը

Ղբ Ղգ     գբ     գգ

Ղմ Ղտ     զմ     չտ

Ղզօն Ղեաղում Ղեմարան
Ղազար Ղեւոնդ

երէկ աղուոր զբօսանք ըրինք
յուլիանէ զգայուն աղջիկ մըն է.
զմայլելի կերգէ

ֆիլոմէն աղտոտեց զգեստը
այդչափ մի՛ շտապեր, պա՛րոն

### ԲԱՂԱՁԱՅՆ ՏԱՌԱԽՈՒՄԲԵՐ

#### ԲԱՌԵՐՈՒՆ ՍԿԻԶԲԸ

[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]

հացը կտրեցինք դանակով
հայրիկը երկու ծրար կտաւ գնեց
փնտռողը կը գտնէ ուզածը
գնդակը կլոր է
անձրեւէն թրջեցանք, խխում
դարձանք
առանց մտածելու գործի մի՛ սկսիր
երէկ շատ պտտեցանք
պարտիզպանը կը ջնջէ վնասակար
ճճիները





[illegible]
[illegible]
[illegible]

### ԲԱՂԱՁԱՅՆ ՏԱՌԱԽՈՒՄԲԵՐ

#### ԲԱՌԵՐՈՒՆ ՎԵՐՋԸ

[illegible]
[illegible]

մասիս շատ բարձր լեռ է
թանձր մշուշ պատեց չորս դին
մեղուն կու տայ քաղցր մեղր
արուսեակ փայլուն աստղ մըն է

ղուէ՛ն, գիրքդ մաքուր պահէ
ձեռքս շատ մնեցաւ



Նապաստակ,
Յուրի ճապուկ,
ու՞ր կը վազես
փորդ դարդակ:

ԱՌՈԳԱՆԱԿԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹԻՒՆ

ԲԱՌԵՐՈՒ

այս տղան համր է
անիկա իմ հայրիկս է
ամառն ալ անցաւ. ձմեռն ալ
վագր ու գայլ անգութ գազաններեն
կեանքը շատ քաղցր է



այս գիրքը քո՞ւկդ է
հաւերն անգամ բոյն ունին
որն որ ուզես, զայն առ
բարձր լեռան փուքն ու քամին շատ կըլլայ
վարդն ու շուշանը պարտէզներու
զարդերն են
երուանդ գիրքն առաւ թեւին տակ
ու գնաց

անուշ քունիկն աչերն առեր
անուշ հովերն ալ տարուբեր,
իմ տատրակիս քունն է եկեր,
անուշ երգով ըսեմ օրօր։

## ԱՅԲՈՒԲԵՆ

### ՍՈՎՈՐԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ ԵՒ ԱՆՈՒՆՆԵՐՈՎ

ա բ գ դ ե զ է ը թ ժ ի լ
խ ծ կ հ ձ ղ ճ մ յ ն շ ո
չ պ ջ ռ ս վ տ ր ց ւ փ ք օ ֆ

ա բ գ     դ ե զ     է ը թ     ժ ի լ
խ ծ կ     հ ձ ղ     ճ մ յ     ն շ ո
չ պ ջ     ռ ս վ     տ ր ց     ւ փ ք     օ ֆ

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| այբ | բեն | գիմ | դա | եչ | զա |
| է | ըթ | թո | ժէ | ինի | լիւն |
| խէ | ծա | կեն | հո | ձա | ղատ |
| ճէ | մեն | յի | նու | շա | վո |
| չա | պէ | ջէ | ռա | սէ | վեւ |
| տիւն | րէ | ցո | իւն | փիւր | քէ |
| | | օ | ֆէ | | |



## ԹՈՒԱՆՇԱՆՆԵՐ

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 0 | 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 0 | 1 | 2 | 3 | 4 | 5 |
| զերօ | մէկ | երկու | երեք | չորս | հինգ |
| 6 | 7 | 8 | 9 | 10 | |
| 6 | 7 | 8 | 9 | 10 | |
| վեց | եօթը | ութ | ինը | տասը | |

## ԱՅԲՈՒԲԵՆԸ (ոտանաւոր)

այբ բեն գիմ,
—կեցցէ ազգ իմ,
դա եչ զա
—պապադ տեսայ
է ըթ թօ,
—ո՞ւր ես, պետօ.
ժէ ինի լիւն,
—կապոյտ հիլուն.

խէ ծա կեն,
—մախր ծակէն.
հօ ձա դաա,
—եգիր դաթ դաթ.
ճէ ժեն յի,
—խմէ՛ գինի,
նու շա վո,
—ապո՛ւշ ուօ.
չա պէ չէ,
—սրինգ փչէ.
ռա սէ վեւ,
—ցամթեց արեւ.
տիւն բէ ցո,
—ըսէ՛, կեցո.
իւն փիւր քէ,
—ա՛լ հերիք է.
և օ ֆէ
—հերի՛ք, ճ՛ֆ, է՛...։

---



Ա ա Արամ Արշակ Անուն

Ա ա Արամ Արշակ Անուն

Ս ս Սուրէն Սարգիս Սակառ

Ս ս Սուրէն Սարգիս Սակառ

Անահիտ բարի աղջիկ մըն է։
Անճարակին կերածն է բանջար։
Ագուէսը պոչը վկայ կը բռնէ։

Սիրանոյշ դպրոց կ՚երթայ։
Սեղանին վրայ շիշեր դրուած են։
Սև աչքը մօրուց պէտք է։

---



Աշխատասէրն ու ծոյլը

Միսակ աշխատասէր է . կ'ըսէ ։
—Այսօր սորվիմ վաղը խաղամ ։
Սարգիս ծոյլ է . կ'ըսէ ։
—Այսօր խաղամ, վաղը սորվիմ ։



Ո ո Ոգի Որոմ Ոստրէ

Ո ո Ոգի Որոմ Ոստրէ

Ռ ռ Ռուս Ռահան Ռետին

Ռ ռ Ռուս Ռահան Ռետին

Որսորդը կաքաւներ որսաց ։
Ոստրէն ծովային կենդանի մըն է ։

Ռուսիա շատ ընդարձակ երկիր է ։
Ռահանը հոտաւէտ բոյս մըն է ։
Ռուբէն շատ մը խաղալիքներ ունի ։



## Ուղտին առակը

—∘—

Ուղտին ըսին թէ՝ վիզդ
ինչու ծուռ է։
Ան ալ ըսաւ.
— Ո՞ր տեղս շիտակ է որ
վիզս ծուռ չըլլայ։

---



Տ տ Տիրան Տնակ Տունկ

*Տ տ Տիրան Տնակ Տունկ*

Օ օ Օննիկ Օշարակ Օղ

*Օ օ Օննիկ Օշարակ Օղ*

*Տանձը խիստ համեղ պտուղ մըն է։*
*Տասն անգամ չափէ, մէկ անգամ կտրէ*
*Տիգրան Սուրէնին զարկաւ։*

*Օդը շատ գեղեցիկ է այսօր։*
*Օհաննէս և Արամ միասին*
*զբօսանք ըրին։*

---



## Օրօրերգ

Օրօ՜ր, օրօ՜ր, օրդ շատնայ,
Օրդ շատնայ, տարիդ մեծնայ,
Տարիքդ հազար տարու մօտենայ,
Անձիկդ հազար բարու տիրանայ։



*Ռ ր Ռոպէ Ռոք Ռաֆֆի*

Ռ ր Ռոպէ Ռոք Ռաֆֆի

*Դ դ Դաշտ Դրախտ Դժողք*

Դ դ Դաշտ Դրախտ Դժողք

Ռոքը մանելու գործիք է։
Ռոպէի մը գործ է այս գործը։

Դերանիկ և Տրդատ իրարու քոյր եղբայր են։
Դաշտը լեցուն է մշակներով։



## Առաւօտի երգ

—o—

Ահա ցաթեց կարմիր արեւ,
Անուշ ու պայծառ է օդը։
Ելէք, փայլեցէք սիրուն ծիլեր,
Առաջ լծեցէք արօրը։

---



*Ց ց Ցամաք Ցոլակ Ցորեկ*

Ց ց Ցամաք Ցոլակ Ցորեկ

*Գ գ Գուրգէն Գդակ Գրիչ*

Գ գ Գուրգէն Գդակ Գրիչ

Ցանցով ձուկ կ'որսայ ձկնորսը։

Ցիրուցան մի՛ ձգէք ձեր գիրքերը։

Գեղամ ու Ցոլակ միասին պտոյտի ելան երէկ։

Գառնուկին հետ պառկէ՛, արտոյտին հետ արթնցիր։

---



Գորտին առածը

Գորտին հարցուցեր են թէ ինչո՞ւ միշտ կը կրկռայ։

Ան ալ ըսեր է։

—Անոր համար որ ձայնիս զմայլած եմ.



Պ պ Պարգեւ Պսակ Պնակ

Պ պ Պարգեւ Պսակ Պնակ

Բ բ Բարսեղ Բանակ Բերդ

Բ բ Բարսեղ Բանակ Բերդ

Պատուէ հայրդ ու մայրդ։
Պառաւն իր թանին թթու չըսեր։
Պօղոսիկ Գէորգին հետ հոլ խաղաց։

Բրուտը կաւէ ամաններ կը շինէ։
Բերնէ բերան, ասեղը կ'ըլլայ գերան։



## Սարդն ու բզեզը

—o—

Բզզ Բզզ Բզզ Բզզալով
Բզէզն եկաւ դողդողալով
Ցանց բռնած թակարդը
Բռնեց կանէր մէջ սարդը

---



Լ լ Լուսիա Լիմոն Լակոտ

Լ լ Լուսիա Լիմոն Լակոտ

Ը ը Ընկեր Ընծայ Ընկոյզ

Ը ը Ընկեր Ընծայ Ընկոյզ

Լեւոն աշխատասէր տղայ մըն է։
Լեռ սար ձիւնով ծածկուեցաւ։
Լուսիա իր մամիկը Բարսեղին
սաւաւ

Ընկերդ սիրէ՛ քու անձիդ պէս։
Ընտիր պտուղներ են ելակը, դեղձը,
ծիրանը, խաղողը։

---



## Գետին հանելուկը

---

Օրան օրան ժուռ կուգայ,
Ոտքեր չունի ման կուգայ,
Բերան չունի կուլ կուտայ,
Ըսէք տեսնեմ, ի՞նչ է այն։

---



Ի ի Իսահակ Իրիս Իժ

Ի ի Իսահակ Իրիս Իժ

Կ կ Կապայ Կիւրեղ Կին

Կ կ Կապայ Կիւրեղ Կին

Ինչ որ ցանես, այն կը քաղես

Իժը թունաւոր օձ մըն է։

Կամաց կամաց, բամպակը կ'ըլլայ մանած։

Կլոր եղաւ՝ կացին կ'ընենք. տափակ եղաւ՝ բահ։

---



## Կաղն ու կոյրը

—○—

Կաղն ու կոյրը գետակէն պիտի անցնէին ։

Ինչպէս ընէին .... ։

Կոյրը շուտ մը շալկեց կաղը ։ որ երկուքն ալ ապահով անցան ջուրէն ։

---



*Հ հ Հրանտ Հրեշտակ Հինգ*

Հ հ Հրանտ Հրեշտակ Հինգ

*Ն ն Նեկտար Նշան Նուռ*

Ն ն Նեկտար Նշան Նուռ

Հովիւը գառնուկները կ'արածէր ։

Հրաչեայ եղբայրն է Նորդու Հինին ։

Հազար հեղ մեղր ըսէ, բերանդ չանուշնար ։

Նաւակ նստանք, գիւղ գնացինք ։

Նուարդ Դուխթէն պզտիկ է ։

Նուշը շատ համեղ պտուղ է ։

---



Իշուկին առածը

---

Անօթեցա՞ր, ըսին իշուն

Հա՛, քի՛չ մըն ալ համբերէ.

Կուգայ գարուն, կուգայ աշուն

Ու քեզի խոտ կը բերէ։

---



*Մ մ Մուշեղ Մանգաղ Միտք*

Մ մ Մուշեղ Մանգաղ Միտք

*Ե ե Եղիշէ Երազ Եղիճ*

Ե ե Եղիշէ Երազ Եղիճ

Մեղքը՝ լալով, պարտքը՝ տալով։

Մէկը կայ՝ հազար կ'արժէ, հազար կայ՝ մէկ չարժեր։

Եւգինէ և Մարիամ կառքով պտոյտի ելան։

Ես փոքրիկ եմ, բայց ծոյլ չեմ։

---



## Արթուն Ճնճղուկը

Ես Ճնճղուկն եմ փոքրուկ անուշ,
Ձագուկներս ալ են ճչճչ նուշ,
Ո՞վ չուզեր որ կանուխ կամ ուշ,
Համբոյր մը տայ քնքուշ անուշ։



Խ խ Խորէն Խրամ Խաղող

Խ խ Խորէն Խրամ Խաղող

Փ փ Փեթակ Փետուր Փարչ

Փ փ Փեթակ Փետուր Փարչ

Խեղճերուն և աղքատներուն
պարտինք օգնել։

Խօսքը՝ մեծին, ջուրը՝ պզտիկին։

Խեւը խրատն ի՛նչ ընէ, սեւը՝ սապոնը։

Փեթակին մէջ մեղր կայ։

Փայլինէ փունջ մը ծաղիկ [հաւաքեց։



## Խաղողին հանելուկը

Անոլոր դերձան,
Անծակ մարգրիտ,
Աստուած կը շարէ.
Մարդը կը քակէ։

---



Է է Էակ Էմմա Էրիկ

Է է Էակ Էմմա Էրիկ

Թ թ Թագ Թիակ Թուղթ

Թ թ Թագ Թիակ Թուղթ

Էշն ի՛նչ գիտէ նուշն ի՛նչ է։

Էմմա խելացի աղջիկ մըն է։

Թագուհի մայրիկն է Էլպիսին։

Թռչունը հաւկիթ ածեց իր բոյնին մէջ։

Թրթուրը թիթեռնիկ եղաւ։



Կըռռուռուրիկ

Կըրըռ-ըրիկ, տըրըռ-ըրիկ,
Վերեւ-ընկերըս խաղալ-ըրիկ,
Թռչուններըս Թըռ, Թըռ, Թըռ,
Երգըս [illegible] Ճըռ, Ճըռ, Ճըռ.



Ղ ղ Ղուկաս Ղեւոնդ Ղեկ

Ղ ղ Ղուկաս Ղեւոնդ Ղեկ

Վ վ Վահագն Վարդ Վեմ

Վ վ Վահագն Վարդ Վեմ

Ղազարոս ձիւնագնտակ խաղաց Վահանին հետ։

Ղեկավարը դարձուց նաւը։

Վերգինէ և Ղեւոնդ շատ խելօք են։

Վարդավառ, ծրագր փառ։



## Ապրիմ-մեռնիմ

Ղուկաս և Վահրամ դաշտին մէջ գտան ապրիմ-մեռնիմներ ու սկսան թերթերը մէկիկ մէկիկ փետել ըսելով։

—Ապրիմ... մեռնիմ... ապրիմ... մեռնիմ...։

Թերթերը հատան ապրիմին վրայ և տղաք շատ ուրախացան որ պիտի ապրին։



Ժ ժ Ժանեակ Ժանիք Ժիր

Ժ ժ Ժանեակ Ժանիք Ժիր

Ծ ծ Ծաղիկ Ծորակ Ծիտ

Ծ ծ Ծաղիկ Ծորակ Ծիտ

Ժամը քանի՞ վայրկեան է, Հայկ։

Ժիրայր ի՞նչ աղուոր պարեց։

Ծիտն ի՞նչ է որ եզն ի՞նչ ըլլայ։

Ծիրանը ոսկեգոյն պտուղ մըն է։



## Մոմին հանելուկը

Երկայն աղիք
Ծայրը ծաղիկ։

---

*Ծոյլին կիրակիները*

—•—

*Ծոյլին հարցուցին թէ ինչո՞ւ չի բանիր:*
*— Այսօր կիրակի է, ըսաւ.*
*Ծոյլին համար ամէն օր կիրակի է*

---



*Շ շ Շապիկ Շերամ Շիւղ*

Շ շ  Շապիկ  Շերամ  Շիւղ

*Ջ ջ Ջութակ Ջերմ. Ջուր*

Ջ ջ  Ջութակ  Ջերմ  Ջուր

Շունը հաչելով գայլ կը բերէ։
Շերամը մետաքս կը հանէ։
Ջաղացքով ալիւր կ'աղան։
Ջութակ կրնա՞ս նուագել. Շուշա՛ն։

---



## Հովիւին երգը

Լուսնկան անուշ. հովն անուշ,
Շինականին քունն անուշ.
Ցաթեց լուսնակ երկինքէն,
Հովուին սրինգն էր անուշ։



Յ յ Յիսուս Յոպոպ Յարդ

Յ յ Յիսուս Յոպոպ Յարդ

Ք ք Քուրիկ Քաղաք Քար

Ք ք Քուրիկ Քաղաք Քար

Յուլիանէ դպրոց կ'երթայ։

Յարգեցէք ծեր մարդիկը։

Քամին բերածը քամին կը տանի։

Քունն ու մեռելը մէկ է։

Շար խանողին շարէ շարքին
Քեզ խանողին շարէ շարքին



Կրիային հանելուկը

Քար քարի վրայ, քար չէ,
Լեռ սար կ'արծի, դուար չէ.
Հաւ կիթ կ'ածէ, հաւ չէ։

Ձ ձ Ձորակ Ձայն Ձուկ

Ձ ձ Ձորակ Ձայն Ձուկ

Ճ ճ Ճագար Ճանճ Ճիւղ

Ճ ճ Ճագար Ճանճ Ճիւղ

Ձմեռը ձիւն կուգայ։
Ձին ու ջորին կռուեցան, մէջտեղն
էշը սատկեցաւ։



Ճանճն ի՛նչ է որ ճենճն ինչ ըլլայ։
Ճերմակ է շուշանը, կարմիր է վարդը։



Ձուկին առածը

Ձուկին հարցուցին թէ ծովէն ի՞նչ լուր։

Ըսաւ.—Շատ բան ունիմ ըսելու, բայց բերանս ջուրով լի է։

Չ չ Չամիչ Չար Չուան

Չ չ Չամիչ Չար Չուան

Զ զ Զուէն Զապէլ Զառ

Զ զ Զուէն Զապէլ Զառ

Չար ընկերներէ հեռացէ՛ք ։
Չամիչը ի՞նչ բանէ կը շինուի ։

Զմիւռնիա շքեղ քաղաք է ։
Զարդարեցին Ծնունդի ծառը ։

---

## Չամիչին հանելուկը

Սեւ ուլիկ
Փէտէ պոչիկ ։

---





## Մարտն ու Զատիկը

Մարտը կուգայ ծաղիկներով,
Երկրից հաւքե՛րը կարդալով.
Ահա՛ եկաւ մեր Սուրբ Զատիկ,
Բերե՛նք, ներկե՛նք կարմիր հաւկիթ ։

---

Ֆ ֆ Ֆիլոմէն Ֆրանք Ֆէս

Ֆ ֆ Ֆիլոմէն Ֆրանք Ֆէս

Ֆիլոմէն և Եղուարդ միասին պարեցին ։
Ֆուլիկս Փառանձեմին դրացի է ։

---

## Ընկերիս նամակը

Ընկերս նամակ մը գրեց իր
ծառին այսպէս

Սիրելի իմ ծառս.

Ուրախ եղիր և ծաղկիր որ
երբեմն կը կարդամ և կը գրեմ:
Ինչու այս նամակը քեզ գրեցի:

Չորցածդ կը հանգստացնեմ
սիրով:

Ընկերդ

---

### Հանելուկ

Ճերմակ դաշտիկ = Թուղթ
Սեւ սեւ հնտիկ = Մելան
Ձեռքով ցանէ, = Գրել
Լեզուով հնձէ: = Կարդալ

---



## ԳԼԽԱԳԻՐ ԱՅԲՈՒԲԵՆ

### ՁԵՌԱԳԻՐ

Ա Բ Գ Դ Ե Զ Է Ը Թ
Ժ Ի Լ Խ Ծ Կ Հ Ձ Ղ Ճ Մ
Յ Ն Շ Ո Չ Պ Ջ Ռ Ս Վ
Տ Ր Ց Ւ Փ Ք Օ Ֆ

---

### ՏՊԱԳԻՐ

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Ա | Բ | Գ | Դ | Ե | Զ | Է | Ը | Թ |
| Ժ | Ի | Լ | Խ | Ծ | Կ | Հ | Ձ | Ղ |
| Ճ | Մ | Յ | Ն | Շ | Ո | Չ | Պ | Ջ |
| Ռ | Ս | Վ | Տ | Ր | Ց | Ւ | Փ | Ք |
| | | | Օ | Ֆ | | | | |



## ԱՔԱՂԱՂԻՆ ԵՐԳԸ

Աքաղաղը կ'երգէ. կուկուլիկկո՜ւ...։

Աքաղաղը կ'ուզէ ըսել. պզտի՛կ տղաք, հերի՛ք քնանաք։

Աքաղաղը կը կանչէ. կուկուլիկկո՜ւ...։

Արեւը ծագեցաւ. պզտի՛կ տղաք, ելէ՛ք, ելէ՛ք։

## ՄԱՆԿԱԿԱՆ ԱՂՕԹՔ

Ո՛վ Մեծդ Աստուած,
Որ ես տուած
Մեզ բարի հայր
Եւ գթոտ մայր,



Տո՛ւր մեզ շնորհք,
Ըսե՛նք աղօթք,
Զըլլա՛նք անհոգ,
Ապրի՛նք խելօք.
Պարկեշտ ու հեզ,
Եւ սիրենք Քեզ։

## ԻՄ ԾՆՈՂՔՍ

Ես փոքրիկ տղայ մըն եմ։ Ես ունիմ հայր ու մայր։

Հայրս ու մայրս իմ ծնողքս են։

Իմ ծնողքս զիս կը կերակրեն ու կը խնամեն։ Անոնք ինծի կուտան հագուստ և կօշիկ։ Կուտան ինծի կակուղ անկողին քնանալու։

Իմ ծնողքս զիս շատ կը սիրեն։ Ես ալ զանոնք կը սիրեմ։

## ՀԱՄԲՈՅՐՆԵՐՍ

Երեք համբոյր ունիմ տալիք
Անուշ, համով երեք պաչիկ,
Է՛ն խոշորն է իմ մեծ եղբօր,
Է՛ն ուժովը՝ իմ բարի հօր,
Բայց է՛ն երկարն, գիտէ՞ք, որի՞...
Ան մայրիկին կը վիճակի։

---

## ՁԳԱՅԱՐԱՆՆԵՐԸ

Ես աչքով կը տեսնեմ։
Ականջով կը լսեմ։
Քիթով հոտ կ'առնեմ։
Լեզուով կը ճաշակեմ։
Մատերով կը շօշափեմ։
Ցուրտը, տաքը, կոշտն ու կակուղը մարմինովս կ'զգամ։
Իսկ խելօք գլուխովս կը մտածեմ։

---





## ՃՆՃՂՈՒԿԸ

Ա՜յ ճնճուղիկ,
Պստիկ մստիկ,
Կարմիր տոտիկ,
Սպիտակ փորիկ,
Ուտես կուտիկ,
Խմես ջրիկ,
Առուին եզրիկ,
Կ'երթաս բունիկ,
Ձագիդ քովիկ։

---

## ՄԱՏԵՐՈՒ ՀԱՄՐԱՆՔԸ

Գէորգ խնձոր մը ունէր ձեռքը։ Պզտիկ քոյրը տեսաւ ու ըսաւ։

—Կէսն ինծի կուտա՞ս...։

## ԿԼՈՐԻԿ, ԹՈՄՊՈՒԼԻԿ

Կլորիկ, թոմպուլիկ,
Հասակս է պստըլիկ
Թուշերս են խնձորիկ
Աչքերս են սեւուլիկ
Քթիկս է մինինիկ,
Բերանս է անուշիկ
Կա՞յ ինծի պէս ազուորիկ...
Չկա՜յ, չկա՜յ, չկա՜յ...

## ԼԱՒ ԸՆԿԵՐ

Լերան հասարակ ծաղիկը պատահմամբ մեխակին հետ մէկ թաղարի մէջ տնկեցին։
Եւ ի՜նչ եղաւ, գիտէ՞ք...
Մեխակին պէս ինք ալ անուշ հոտ ունեցաւ։

## ԾԱՓԻԿ, ԾԱՓԻԿ

Ծափիկ, ծափիկ ծիրանի,
Կարմիր խնձոր կը նմանի,



Ոսկի սրմա մազերը
Հովը թել թել կը տանի,
Ո՞ւր կը տանի, թո՛ղ տանի,
Պապուկին պաղչան կը տանի։

## ԾՈՅԼՆ ՈՒ ՋՈՒՐԸ

Ծոյլը կը հարցնէ ջուրին.
—Ջո՛ւր, ո՞ւր կ'երթաս, դադար չես առներ։
Ջուրը կ'ըսէ.
—Կ'երթամ արտ անտառ ջրելու որ կանանչնայ, ծոյլը տեսնէ՝ ամչնայ...։

## ՄԱՏԵՐՈՒ ԽԱՂ

Ճի՜ւ ճի՜ւ, մատնոցիկ,
Սեւ ագռաւը բռնեցինք,
Եղով, մեղրով տապկեցինք,
Սանամարին կերցուցինք,
Թը՜ռ...

## ԱՐԵՒԻՆ

Արե՛ւ, եկո՛ւր չո՛ւք գնա՛,
Բեզի չամիչ, լեպլեպ տամ,
Խունկ տամ, մոմ տամ, պատկեր տամ,
Բեզի կարմիր կօշիկ տամ,
Բեզի փարչ մը գինի տամ.
Արե՛ւ, եկո՛ւր, չո՛ւք, գնա՛։



## ԱՐԱԳԻԼԻՆ ԱՌԱԾԸ

Արագիլին հարցուցին թէ սրունքդ ինչո՞ւ կարմիր է։
Ըսաւ.—Ամառ է։
—Ես քեզ ամա՛ռն ալ տեսայ, ձմե՛ռն ալ։



## ԻՄ ՄԱՆՉՈՒԿՍ

Իմ մանչուկիս աչուկը
Կը նմանի ժամուն խաչուկը։

Իմ մանչուկիս բերանը
Կը նմանի ժամուն խորանը։

Իմ մանչուկիս կռնակը
Կը նմանի ժամուն դռնակը։

## ՔՈՅՐ ՈՒ ԵՂԲԱՅՐ

Հրաչին քոյրը կը խաղար եղբօրը խաղալիքին հետ և յանկարծ կոտրեց զայն։ Հրաչ բարկացաւ և յարձակեցաւ քրոջը վրայ որպէսզի ծեծէ։

—Զիս մի՛ ծեծեր, ես քեզի կը համբուրեմ, ըսաւ քոյրը։

—Հրաչ ամչցաւ և ներեց քրոջը։



## ԳԱՌՆՈՒԿՍ

Սիրո՜ւն անմեղ իմ գառնուկ,
Բուրդըդ ճերմակ ու փափուկ,
Վազելով դաշտ ու արօտ,
Մօրըդ կը քաշես կարօտ։

Մի՛ լար, գառնո՛ւկ սիրական,
Փոքրիկ տղու մը նման,
Կուգայ մայրըդ. Հետը շատ
Կը բերէ քեզ անուշ կաթ։

## ՇՈՒՏ ԱՍԵԼՈՒԿ

Վահէ ըսաւ Զապէլին. — Շուտ շուտ ըսէ՛ տեսնեմ.



Ձուկը բռնեմ, ձուկ ուտեմ։
Մուկը բռնեմ, ձուկ ուտեմ։
Զապէլ կրկնեց.
— Ձուկը բռնեմ, ձուկ ուտեմ։
Մուկը բռնեմ, մուկ ուտեմ։
— Հա՜, հա՜, հա՜, խնդաց Վահէ, ատ չեղաւ, մուկը կերար։



## ԼՈՒՍԻՆԸ

Նայէ՛, մա՛յրիկ, նայէ՛ վեր,
Լուսինն ինչպէս է պայծառ,
Երկինքի մէջ անըստուեր,
Կը թափառի վերդ լամպար։

Անցած շաբաթ պզտիկ էր,
Ու աղեղի պէս ալ կոր.
Հիմա ո՛րչափ մեծցեր է,
Մեծ Օի պէս է կլոր։



## ՓՔՈՑԻՆ ՀԱՆԵԼՈՒԿԸ

Շունչ կ'առնէ,
Հոգի չունի,
Փոր ունի,
Աղիք չունի։

## ԱՆՁՐԵՒԻՆ ԵՐԳԸ

Անձրեւ կուգայ, ձիւն կուգայ,
Տէրտէր պապը տուն կուգայ,
Բազմոց ձգեմ, տեղ չկայ,



Փիլաւ եփեմ, եղ չկայ,
Ապուր եփեմ, ջուր չկայ,
Անձրեւ կուգայ, ձիւն կուգայ։

## ՄԷԿ ԱՍՏՈՒԱԾ

Գեղամ հարցուց Աղնիւին։
—Գիտե՞ս, քանի՞ Աստուած կայ։
—Մէկ Աստուած։
—Ինչէ՞ն գիտես։
—Որովհետեւ Աստուած ամէն տեղ է, ու քանի որ ամէն տեղ է, ա՛լ ուրիշ աստուածի տեղ չի մնար։



## ԹՌՉՆԻԿԻՆ

Երգէ՛ թռչնիկ,
Քու բոյնիդ մէջէն,

Ուր որ ձագուկներդ
Հեզիկ կը ննջեն ։

Երգէ անոնց,
Երգեր անհամար,
Երգ մըն ալ, Թռչնիկ,
Երգէ ինծի համար ։

## ԱՐԵՒՆ Է ԾԱԳԵՐ

Արեւն է ծագեր վեր մեր երդիքին,
Ծագեր է ծագեր լոյս Լուսաւորչին ․
Զատիկն է եկեր վեր մեր երդիքին,
Հաւիկն է արթուն Սուրբ Կարապետին,
Կարմիր է հաւկիթ մեր Սուրբ Զատիկին,
Հաւիկն է ածեր Սուրբ Կարապետին ։





## ՇՆԻԿ

Շնիկս իմ սիրուն,
Ինչ աղուոր ես դուն,
Ի՜նչ գանգուր վարսեր
Գլխէդ են կախուեր ։

Երբ ուրախ ըլլամ,
Ու խնդամ, խաղամ,
Ինծի հետ դուն ալ
Կը սիրես խաղալ ։

Իսկ երբ սաստեն զիս,

Ու ցաւի հոգիս,
Դուն ալ ինծի պէս
Արցունք կը թափես։

---

## ՍԱԿԱՒԱՊԵՏ ՄԱՅՐԸ

Մայր մը տասը զաւակ ունէր։ Ամէն առտու տասը հաւկիթ կը խաշէր, մէյմէկ հատ կը բաժնէր անոնց միջեւ։

—Մա՛յրիկ, քեզի բան չմնաց, կ'ըսէին տըղաքը։

—Մայրիկնիդ կրո՛ղ թող ուտէ, կ'ըսէ մայրիկը, ամէն մէկդ մէյ մէկ պատառ տուէք ձեր հաւկիթէն, ինծի կը բաւէ։

---

## ՊԶՏԻԿ ԲԱՂՁԱՆՔՆԵՐ

Այսօր ի՞նչ է, կիրակի է,
Պապան ինծի փարա մը տայ.
Փարան տանիմ մշակին տամ
Մշակն ինծի ցորեն տայ.



Ցորենը տանիմ ջաղացքին տամ,
Ջաղացքն ինծի ալիւր տայ.
Ալիւրը տանիմ տաշտին տամ,
Տաշտը ինծի խմոր տայ.
Խմորը տանիմ թոնիրին տամ,
Թոնիրն ինծի կլլիկ տայ.
Կլլիկը տանիմ հովիւին տամ,
Հովիւն ինծի գառնուկ մը տայ.
Գառնուկը տանիմ Աստըծուն տամ,
Աստուածն ինծի ալւո՛ր աղբարիկ մը տայ։

---

## ԱՇՈՒՆ

Գարուն էր, եկաւ աշուն,
Ձիւն է բռներ վեր սարերուն.
Թըլթիկ մը տանք կռունկներուն,
Տանին հասցնեն ղարիպներուն։

---

## ԱՅԲՈՒԲԵՆ ՇԵՂԱԳԻՐ

ա բ գ դ ե զ է ը թ
ժ ի լ խ ծ կ հ ձ ղ
ճ մ յ ն շ ո չ պ ջ
ռ ս վ տ ր ց ւ փ ք
օ ֆ

---

*ա բ գ դ ե զ է ը թ*
*ժ ի լ խ ծ կ հ ձ ղ*
*ճ մ յ ն շ ո չ պ ջ*
*ռ ս վ տ ր ց ւ փ ք*
*օ ֆ*

Հ.Ս.Խ.Հ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI-1922
имени А. Мясникяна
*Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՀՀ Ազգային գրադարան
NL0248273

7993